ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/101

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
Մասնակից՝ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ3» ծածկագրով գնանշման հարցում, ավտոպահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5699-2021 գրությամբ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.04.2021թ.-ի թիվ 20/345 գրության հիման վրա, 15.04.2021թ.-ին «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 15.04.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 16.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/101 համարի ծածկագիրը:

28.04.2021թ.-ին և 14.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.05.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 13.04.2021թ.-ի թիվ 20/345 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 26.03.2021թ.-ի թիվ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ3» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման մասնակից՝ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. **<u>«Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 16.04.2021թ.-ին գրությամբ դիմել է «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.04.2021թ.-ի թիվ

26/26-1/5699-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով գրավոր կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ բանավոր կերպով հայտնելով իր դիրքորոշումը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ:

4. **ՍՑ-LO**-2021/101 **ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 26.03.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ),

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն:

iii. «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ թիվ 1 հավելվածը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. 07.04.2021թ.-ին «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ մասնակցելով «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ3» (1, 7, 9, 10, 22, 26, 27, 35, 36, 37, 38, 41, 44, 45, 47, 56, 71, 72, 73, 74, 75, 77, 78, 80, 81, 87, 88, 89)

չափաբաժիններին) ծածկագրերով պահեստամասերի ձեռքբերման գնման ընթացակարգին, ներկայացված գնային առաջարկի մեջ վրիպակի պատճառով՝ տեղի է ունեցել ոչ միտումնավոր տեխնիկական անճշտություն, գնային առաջարկների 3-րդ և 5-րդ սյունակներում նշվել է ապրանքների մեկ միավորի գինը ամեն չափաբաժնի համար, որը օրենքից ելնելով հնարավոր չէ ուղղել, իսկ պայմանագիրը կատարել տվյալ գներով անհնար է: Վերոգրյալով պայմանավորված հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից, և խնդրել հանձնաժողովին հաշվի չառնել ներկայացված գնային առաջարկը և բացառել այն:

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն հիմք ընդունելով «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ի կողմից 07.04.2021թ.-ին ներկայացված գրությունը, որոշել է մերժել Մասնակցի կողմից ներկայացված հայտը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5699-2021 գրությամբ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 26.03.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն 07.04.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ մասնակցելով «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ3» ծածկագրերով պահեստամասերի ձեռքբերման գնման ընթացակարգին, ներկայացված գնային առաջարկի մեջ վրիպակի պատճառով՝ տեղի է ունեցել ոչ միտումնավոր տեխնիկական անճշտություն, գնային առաջարկների 3-րդ և 5-րդ սյունակներում նշվել է ապրանքների մեկ միավորի գինը ամեն չափաբաժնի համար, որը օրենքից ելնելով հնարավոր չի եղել ուղղել, իսկ պայմանագիրը կատարել տվյալ գներով անհնար է եղել:

Ելնելով վերոգրյալից «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից, և խնդրել հանձնաժողովին հաշվի չառնել ներկայացված գնային առաջարկը և բացառել այն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ի կողմից 07.04.2021թ.-ին ներկայացված գրությունը, որոշել է մերժել Մասնակցի կողմից ներկայացված հայտը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ3» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5699-2021 գրությամբ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/101 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**